ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

02.02.2012թ գ. Արեգունի

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Արեգունի համայնքի ընդհանուր ժողովը :

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները և Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Գրիգորյանը ժողովի նախագահ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մուրադյան

Ժողովի քարտուղար՝ Ռ. Մանուկյան

ՕՐԱԿԱՐԳ - Արեգունի համայնքի ղեկավար Ա. Վարդանյանի հաշվետվությունը 2011թ. կատարված աշխատանքների մասին:

ԶԵԿՈՒՑՈՂԸ – մանրամասը ներկայացրեց Արեգունի համայնքում 2011թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունը վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ (համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է) հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակության մասնակիցներին համայնքի ավագանին և բնակիչները, հաշվետվության շուրջ հանդես եկավ մարզպետարանի ներկայացուցիչը:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Ա. Վարդանյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Համայնքի ղեկավար Ա. Վարդանյան 2011թ. կատարած ախատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունները գնահատել բավարար:
2. Պահանջները համայնքի ղեկավար Ա. Վարդանյան և գյուղապետարանի աշխատակազմի 2012թ. ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում առկա հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեի սեփական եկամուտները հավաքագրման ամբողջական կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը:

Ժողովի նախագահ՝ Գ. Մուրադյան

Քարտուղար՝ Ռ. Մանուկյան